

ԱԿԱՆԱՎՈՐ ՀԱՅԱԳԵՏԸ
(Հրաչյա Աճառյանի ծննդյան 140-ամյակի առթիվ)

ՀՐԱՉՅԱ ԲԱԼՈՅԱՆ



Ականավոր հայագետ Հրաչյա Աճառյանը ծնվել է 1876 թ. մարտի 8 (20)-ին արևմտահայոց հոգեմտավոր մայրաքաղաք Կ. Պոլսում: 1883–1885 թթ. սովորել է Սամաթիայի Արամյան վարժարանում, 1885–1889 թթ.՝ Սամաթիայի Ս. Մահակյան թաղային վարժարանում: 1889 թ. ընդունվում է Պոլսո Կեդրոնական վարժարանը: 1893-ին ավարտելով այն՝ պաշտոնավարում է Գաղը գյուղի Արամյան դպրոցում, այնուհետև՝ Կարինի Սանասարյան վարժարանում (1894): 1895-ից սովորում է Փարիզի Սորբոնի համալսարանում՝ աշակերտելով Անտուան Մեյեին, ապա Ստրասբուրգում՝ Հայնրիխ Հյուբշմանին (1898): 1898 թ. գալիս և որպես ուսուցիչ պաշտոնավարում է Վաղարշապատում ապա Շուշիում, Նոր Բայազետում, Նոր Նախիջևանում, Թեերանում, Թավրիզում: 1923-ին հրավիրվում է Երևանի պետական համալսարան, որտեղ էլ մինչև կյանքի վերջն աշխատում որպես դասախոս, ամբիոնի վարիչ: 1937 թ.՝ ստալինյան բռնությունների ժամանակ, ձերբակալվում է: Բանտից ազատվում է 1939-ին:

Աճառյանի թողած գիտական ժառանգությունն ամփոփված է նրա ավելի քան 250 մեծ ու փոքր աշխատություններում: Ուսումնասիրել է հայագիտության բոլոր բնագավառները, հիմնադրել է հայերենագիտության մի շարք ճյուղեր՝ հայոց լեզվի պատմություն, հայ բարբառագիտություն¹ և այլն: Հետազոտել է հայերենի բարբառները, զբաղվել դրանց պատմության ու դասակարգման խնդիրներով, ստեղծել բարբառագիտական ուսումնասիրությունների իր մեթոդն ու տեսությունը: Բարբառագիտական կարևորագույն աշխատություններն են՝ «Հայ բարբառների դասակարգումը» (Փարիզ, 1909, ֆրանս.), որն իբրև աստենախոսություն ներկայացրել է Սորբոնի համալսարանին, «Հայ բարբառագիտություն»-ը (Մոսկվա-Նոր

¹ Կարծիք կա, որ հայ բարբառագիտության հիմքը դրվել է Հ. Աճառյանից առաջ (տե՛ս Ա. Մարգարյան. Հրաչյա Աճառյանի բարբառագիտական հայացքները. – «Ջահուկյանական ընթերցումներ», Երևան, 2011, էջ 39–40):

Նախիջևան, 1911) և «Հայերեն գավառական բառարան»-ը (Թիֆլիս, 1913), որ պարունակում է մոտ 30000 գավառական բառ: Այս վերջին բառարանի շնորհիվ հազարավոր բառեր փրկվել են կորստից, մտել շրջանառության մեջ, մուտք գործել հետագայում կազմված հայերեն միալեզվյան բառարաններ, ինչպես նաև գեղարվեստական գրականության լեզու՝ հարստացնելով արդի գրական հայերենի բառապաշարը:

«Հայ բարբառների դասակարգումը» աշխատության մեջ Աճառյանն առաջարկել է հայերեն բարբառների ձևաբանական դասակարգումը՝ բաժանելով դրանք 3 ճյուղի՝ ում, կը և լ: Այս ուսումնասիրությունը, որը հեղինակն ընդարձակելով տպագրել է 1911 թ.՝ որպես «Էմինյան ազգագրական ժողովածուի» Ը հատոր, և որին կցված է հայ բարբառների քարտեզը, ժամանակին բարձր գնահատականի է արժանացել. Ա. Մեյեի կողմից. «Պր. Աճառեանը միակ անձն է աշխարհում, որ կարող էր գրել մի այսպիսի գիրք. նա անշուշտ միակն է, որ ծանօթ է նիւթի եզականապէս ցրուած մատենագիտութեան հետ. ապահովապէս նա միակն է, որ ունի անձնական դիտողութեանց այն պաշարը, որի հետքը ամեն բոպէ երևում է այս Դ ա ս ա լ ո թ ու թ ե ա ն մէջ...»²:

Սորբոնում ուսանելիս Աճառյանը այն ժամանակ նոր ստեղծված ձայնագրող մեքենայով բազմաթիվ փորձեր է կատարում հայերենի տարբեր բարբառների բաղաձայնական համակարգերի վրա: Համալսարանի նորաստեղծ հնչյունաբանական լաբորատորիայի հիմնադիր հնչյունաբան, բարբառագետ Ժան-Պիեռ Ռուսլոյի վկայությամբ՝ Աճառյանն առաջինն էր ոչ միայն հայագիտության, այլև լեզվաբանության մեջ առհասարակ, որ փորձառական հնչյունաբանության մեթոդը կիրառեց բարբառագիտության բնագավառում³: Նա հայերենի փորձառական հնչյունաբանության հիմնադիրն է⁴: Ըստ էության, հայ գիտնականը Եվրոպայում այդ բնագավառով զբաղվող առաջին հետազոտողներից էր: Նա նաև հայ բարբառագիտական քարտեզագրության հիմնադիրն է: Ի դեպ, Աճառյանի ուսումնասիրած բարբառների մի մասը այլևս գոյություն չունի, մի մասն էլ գտնվում է վերացման եզրին:

«Հայոց լեզվի պատմություն» (հ. 1–2, Երևան, 1940–1951) աշխատության մեջ հեղինակն ուսումնասիրել է հայերենի ծագման ու պատմական զարգացման ընթացքը, քննել բառազանձի հարստացման պատմությունը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, զանազան լեզուներից կատարած փոխառությունների հի-

² Հ. Աճառեան. Հայ բարբառագիտութիւն.– Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա–Նոր-Նախիջևան, 1911, էջ XI:

³ Ա. Խաչատրյան. Հ. Աճառյանը հայերենի փորձառական հնչյունաբանության հիմնադիր.– «Լեզվի և ոճի հարցեր», հ. 5, Երևան, 1978, էջ 60:

⁴ Նույն տեղում, էջ 59–69:

ման վրա նկարագրել հայերենի տարբեր գրական արտահայտությունները (գրաբար, միջին հայերեն, արևելահայ և արևմտահայ աշխարհաբար), հայերենի բարբառային ճյուղերը և դրանց մեջ մտնող գլխավոր բարբառները: Ճշտել է հայոց լեզվի դիրքը ցեղակից լեզուների շարքում, բնութագրել վիպասանական, «մեսրոպյան» (դասական), «հետմեսրոպյան», հունարան և լատինարան հայերենի հիմնական առանձնահատկությունները, լուծել հայերենի պատմության բազմաթիվ հարցեր: Աշխատության մեջ Աճառյանի բերած վիճակագրական տեղեկությունները հայերենի բառապաշարի, արմատների բառափոխությունների, բառակազմական ու թեքման քերականական ձևույթների վերաբերյալ ունեն ոչ միայն ավարտուն ցանկեր, այլև կոնկրետ թվային արտահայտություններ: Այս փաստը նկատի ունենալով՝ լեզվաբան Հովհ. Բարսեղյանն Աճառյանին իրավացիորեն համարում է «հայագիտության մեջ վիճակագրական լեզվաբանության ամենահմուտ կիրառողն ու հիմնադիրը»⁵:

Հայերենի պատմահամեմատական ուսումնասիրությանն է նվիրված «Լիակատար քերականություն հայոց լեզվի՝ համեմատությամբ 562 լեզուների» բազմահատոր աշխատությունը (հ. 1-7, Երևան, 1952-2005, Ներածություն, 1955): Ուսումնասիրությունն այստեղ ընթանում է 3 բաժնով՝ ա) ընդհանուր լեզվաբանական, որ աշխարհի բազմաթիվ լեզուների զուգադրական նկարագրությունն է, բ) համեմատական, որ հնդեվրոպական լեզուների և, մասնավորապես, հայերենի համեմատական քերականությունն է՝ դասական հնդեվրոպաբանության մակարդակին ու մեթոդին համապատասխան և գ) պատմական, որ հայերենի քերականական կառուցվածքի ներքին զարգացման ու փոփոխությունների պատմությունն է (V դ. մինչև աշխարհաբարն ու բարբառները): Աշխատությունը, կառուցվածքով և նյութի ընդգրկվածությամբ, եզակի երևույթ է համաաշխարհային լեզվաբանական գրականության մեջ և ունի հանրագիտարանային արժեք: Այստեղ կարելի է գտնել անհրաժեշտ բոլոր տեղեկություններն աշխարհի բազմաթիվ լեզուների և, մանավանդ, հայերենի քերականական կառուցվածքի զարգացման ու փոփոխությունների ողջ պատմական ընթացքի մասին: Հեղինակը գիտականորեն հիմնավորված խոսք է ասել ուսումնասիրվող հարցերի մասին, տվել դրանցից շատերի սպառիչ լուծումը: Հայագիտության համար առանձնապես կարևոր է հին հայերենի հոլովման ու խոնարհման համակարգերի պատմական զարգացման ու փոփոխությունների լուսաբանությունը՝ հիմնված հայ մատենագրության տվյալների խոր վերլուծության վրա: Ուշագրավ է հատկապես հայերենի բաղաձայնական համակարգի տեսությունը: Աշխատության ներածական հատորում ամբողջապես արտահայտվել են գիտնականի լեզվաբանական տեսական հայացքները: Նշենք, որ Աճառյանը կամե-

⁵ Հ. Բարսեղյան. Հր. Աճառյանը հայոց լեզվի պատմության հետազոտող.- «Բանբեր Երևանի համալսարանի», 1976, - 3, էջ 51:

նում էր հայոց լեզուն համեմատել 600 լեզուների հետ, ցավոք, 38 լեզվի քերականություն չկարողացավ գտնել, և ուսումնասիրությունը սահմանափակվեց 562 լեզուների համեմատությամբ:

Հայագետը եռամաս մենագրություն է գրել Մեսրոպ Մաշտոցի կյանքի ու գործունեության, հայ գրերի ստեղծման պատմության և Մեսրոպին ու հայ գրերին վերաբերող աղբյուրների մասին («Մ. Մեսրոպի և գրերու գյուտի պատմության աղբյուրներն ու անոնց քննությունը» (Փարիզ, 1907), «Հայոց գրերը» (Վիեննա, 1928, Երևան, 1968, 1984): «Հայոց գրերը» աշխատության մասին լեզվաբան Էդ. Աղայանը գրում է. «Աճառյանի այս հետազոտությունը լավագույնը և ամբողջականն է մինչև այժմ հրատարակված այն բոլոր ուսումնասիրություններից, որոնք նվիրված են Մեսրոպ Մաշտոցի կենսագրությանը, հայ գրերի գյուտին, հայ գրերի պատմությանը, Մաշտոցին ու գրերի գյուտի պատմությանը վերաբերող աղբյուրների քննությանը և նման խնդիրների»⁶:

Աճառյանի բառարանագրական առաջին աշխատանքը «Թուրքերենն փոխառյալ բառեր հայերենի մեջ» ուսումնասիրությունն է (Մոսկվա-Վաղարշապատ, 1902). հայագիտության մեջ առաջին անգամ այստեղ քննվել է թուրքերենի ազդեցությունը հայերենի վրա:

Շուրջ քառասնամյա անձանձիր աշխատանքի արդյունք է «Հայերեն արմատական բառարան»-ը (հ. 1–7, Երևան, 1926–1935): Այն ներառում է հայ հին և միջնադարյան մատենագրության մեջ գործածված 11000 արմատական բառ՝ բացատրություններով, քերականական և բառագիտական տեղեկություններով ու 5095 արմատի ստուգաբանությամբ: Բառարանում տրվում են գլխաբառի քերականական ձևերը, իմաստային բացատրությունները, հնագույն գործածությունների մասին եղած մատենագրական վկայությունները, տարբեր գրչությունները և ածանցավոր ձևերն ու բարդությունները, բառի ծագման պատմությունը, գլխաբառի ստուգաբանության պատմությունը, գլխաբառի զանազան ձևերը՝ հայերենի 30 բարբառներում, նաև ցույց է տրվում, թե հայերեն բառը որ լեզվին է անցել իբրև փոխառություն: Կոթողային այս աշխատանքը բարձր է գնահատվել ժամանակի ականավոր հայագետների կողմից. նրանցից Ա. Մեյեն գրել է. «Ոչ մի լեզուի համար չկայ այսքան ճոխ, այսքան կատարեալ ստուգաբանական բառարան: Հպարտ եմ, որ ունեցել եմ Պր. Աճառեանին երկար տարիներ իմ աշակերտների թւում. նա մէկն է նրանցից, որոնք պատիւ են բերում այն դպրոցին, որից անցել են»⁷: Մեր հայագետների արձագանքներից հիշատակության արժանի է «Հանդես ամսօրյայի» երկարամյա խմբագիր Ներսես Ակինյանի ծավալուն գրախոսությունը. «Հսկայական գործի մը առջև կը գտնուիմ: «Հայերեն արմատական բառարան», այսպէս անպա-

⁶ Է. Աղայան. Լեզվաբանական հետազոտություններ, Երևան, 2003, էջ 361:

⁷ Հ. Աճառեան. Հայերեն արմատական բառարան, հ. Է, Երևան, 1935, էջ 205:

ճոյճ որակած է հեղինակը իւր աշխատասիրութիւնը. բայց այս վերնագիրը չի ներկայացնէր ճշգրիտ գաղափար բովանդակութեանը մասին. ես պիտի նախընտրէի կոչել *ԲԱՌԱԳԱՆՁ ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ*, արմատական, ստուգաբանական, գաւառաբանական եւ պատմական ուսումնասիրութեամբ բառերու: Այս յորջորջումը լիովին պիտի համապատասխանէր այն բովանդակութեան, զոր կ'ընդգրկէ *Բառագիրք*:... Զգլխիչ ծրագիր արդարեւ: Ի տես այս ծրագրին պիտի բացականչէի, թէ Հեղինակը ձեռնամուխ եղած է յանհնարինս: Անհատական ոյժը չէր կարող հասնիլ այս ընդարձակածաւալ կառուցուածքին կատարման: Բայց Աճառեան հասած է բարեաւ: Նա տուած է աշխատութիւն մը, որ կը մնայ աննախընթաց օրինակ, նոյն իսկ համաշխարհային գրականութեան մէջ»⁸:

Հ. Աճառեանը «Հայոց անձնանունների բառարան»-ում (հ. 1–5, Երևան, 1942–1962) հավաքել և ուսումնասիրել է V– XIII դդ. հայ մատենագրության մեջ հիշատակված անձնանունները, տվել դրանց մեծագույն մասի ստուգաբանությունը, նաև այդ անուններով հայտնի անձանց մասին համառոտ տեղեկություններ:

Մեծ լեզվաբանը գրադվել է նաև տեղանունների բառարանի կազմմամբ. քարտազրել էր 1500 տեղանուն, սակայն օբյեկտիվ պատճառներով տեղանունների հավաքման գործը մնացել է կիսատ: Նա լուրջ ներդրում ունի նաև մասնագիտական բառարաններ կազմելու և տերմիններ ստեղծելու գործում. նրա ղեկավարությամբ և մասնակցությամբ կազմված «Ռուս-հայերեն բառարան շինարարական կառուցվածքների»-ն (Երևան, 1928) ընդգրկում է զգալի քանակությամբ նոր բառեր ու բառակապակցություններ: Մ. Աբեղյանի և Գր. Ղափանցյանի հետ մասնակցել է նաև «Երկաթուղային տերմինների ռուս-հայերեն բառարան»-ի (Թիֆլիս, 1925) ստեղծմանը:

Բացառիկ բարեխղճությամբ գիտնականը քննել է հայոց հին ձեռագրերը, կազմել տարբեր վայրերում պահվող ձեռագրերի ցուցակները («Ցուցակ հայերեն ձեռագրաց Թավրիզի» (Վիեննա, 1910), «Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Բայազետի» (Վիեննա, 1924), «Ցուցակ հայերեն ձեռագրաց Թեհրանի» (Վիեննա, 1936) և այլն): Բանասիրական տեսանկյունից կարևոր է Եզնիկի՝ պահպանված միակ ձեռագրի համեմատությունը հրատարակված բնագրի հետ («Քննություն և համեմատություն Եզնկա նորագյուտ ձեռագրին» (Վիեննա, 1904)՝ Գ. Մկրտչյանի համահեղինակությամբ):

Աճառեանն ուսումնասիրել է նաև հայ գրականության, հայոց պատմության խնդիրներ և Հայկական հարցը, դրանց նվիրել մի շարք աշխատություններ՝ «Պատմություն հայոց նոր գրականության» (3 պրակ, Վաղարշապատ – Նոր-Նախիջևան, 1906–1912), «Տաճկահայոց հարցի պատմությունը» (Նոր Նախիջևան, 1915), «Եր-

⁸ «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1930, թիւ 7–8, էջ 483–484:

վանդ Շահագիզ» (Ն. Նախիջևան, 1917), «Տիկին Սրբուհի Տյուսաբ» (Էջմիածին, 1951), «Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ» (Երևան, 1999), «Հայ գաղթականության պատմություն» (Երևան, 2002), «Հայոց պատմություն (հյուսված ընդհանուր պատմության հետ)» (Երևան, 2004) և այլն:

Հայագետը թողել է ձեռագիր մեծարժեք աշխատություններ. դրանց մեջ կա 300 էջից բաղկացած (մեքենագիր) մի չափազանց մանրակրկիտ աշխատություն՝ «Հայ լեզվաբանական մատենագիտություն» վերնագրով, որտեղ այբբենական կարգով հանգամանորեն ներկայացնում և նկարագրում է իր բոլոր աշխատություններում օգտագործված 3800 գրքերի ու հոդվածների ցանկը, որը հետագայում համալրվել է: Փաստորեն, Աճառյանը հայ լեզվաբանական մատենագիտության սկզբնավորողն է: Անտիպներից են նաև «Կարապետ Արևելցի», «Քննություն Սվեդիո բարբառի» աշխատությունները և այլն:

Հ. Աճառյանը եղել է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս (1943), 21 տարեկանում՝ Փարիզի լեզվաբանական ընկերության անդամ (1897), Չեխոսլովակիայի արևելագիտական ինստիտուտի գիտական բաժնի թղթակից անդամ (1937):

Ի վերջո, ո՞րն է Աճառյանի բերած նորույթը հայերենագիտության տիրույթում: Խոսքը տանք նրա սիրելի ուսանողներից մեկին՝ Գառնիկ Ստեփանյանին. մինչ Աճառյանը հայ լեզվաբանությամբ զբաղվել են հիմնականում օտար գիտնականները և Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամները: Առաջին խմբին պատկանող հետազոտողները մեր լեզուն ուսումնասիրել են գերազանցապես բառարանական աստղծի հիման վրա՝ շատ ընդհանուր ծանոթություն ունենալով հայկական մատենագրությանը: Ժողովրդական զանգվածների հետ գործ չեն ունեցել: Վիեննայի ու Վենետիկի Մխիթարյանները այդ օտար լեզվաբանների համեմատությամբ ունեին մի առավելություն՝ սքանչելի գիտեին հայ մատենագրությունը, ուսումնասիրել էին այն նաև լեզվաբանական տեսանկյունից և հանգել ուշագրավ եզրակացությունների, անգամ գյուտերի, որոնցից էլ հենց մեսրոպյան ու հետմեսրոպյան գրաբարների տարբերությունը: Ուրեմն նրանք իրենց ձեռքի տակ ունեին և՛ բառարանագրական աստղծը, և՛ մատենագրական նյութը, բայց ապրելով կրոնական միաբանության սեղմ շրջանակների մեջ՝ դարձյալ կտրված էին բնաշխարհից: Հայոց լեզուն նրանք հիմնականում ուսումնասիրում էին գրավոր աղբյուրներից, մինչդեռ հնդեվրոպական դպրոցի ամենամեծ նվաճումներից մեկն այն էր, որ բացահայտել էր, թե որևէ լեզվի ուսումնասիրման առաջին նախապայմաններից մեկը ձայնաբանությունն է, թե լեզուների հնչյունական համակարգն ամենից ավանդապահն է: Աճառյանի առավելությունը, այսպիսով, այդ երկու խմբի ներկայացուցիչների համեմատությամբ այն էր, որ նա մեր լեզուն ուսումնասիրում էր վերոհիշյալ գիտության ձեռք բերած նվաճումներով զինվելուց բացի տասնյակ այլ բարբառների քննությամբ: Հայերեն բարբառների հանգամանալից հետազոտությունը, այդ

բարբառների համակարգության սահմանումը, դրանց ուսումնասիրման սկզբունքների որոշումը. ահա այն նորը, որ բերեց Աճառյանը հայոց լեզվի ուսումնասիրության մեջ: Նա հայ լեզվաբանությունը զարգացրեց նաև այլ կողմերով. եթե մինչև 1870-ական թթ. ստուգաբանված էին փոքր թվով հայերեն բառեր, Հյուբշմանի բժախնդիր ցնցուղով անցնելուց և լրացվելուց հետո դրանց թիվը կրկնապատկվել էր, ապա Աճառյանը, օգտվելով վերոհիշյալ աստղծից, ավելացրեց ստուգաբանված բառերի թիվը: Վերջապես մինչև Աճառյանը գիտնականներն զբաղվել էին հիմնականում այն հարցով, թե ինչ ազդեցություն է կրել հայերենը ցեղակից կամ հարևան լեզուներից, նրանց չէր զբաղեցրել այն խնդիրը, թե հայերենն էլ իր հերթին ազդե՞լ է այլ լեզուների վրա: Աճառյանն առաջինը լրջորեն զբաղվեց նաև այս հարցով, արդյունքները տալով «Արմատական բառարանի» ուշագրավ բաժիններից մեկում⁹:

Աճառյանը գիտնականի չափանիշ էր, կատարելատիպ: Օժտված էր այնպիսի որակներով, որոնք պետք է ունենա առնվազն իրեն հարգող, իսկ առավելագույնը իր առջև գիտության մեջ ծանրակշիռ խոսք ասելու նպատակ դրած յուրաքանչյուր հետազոտող: Գիտնականի կարևոր որակներից են գիտական բարեխղճությունն ու պատասխանատվությունը, առանց որոնց նրա կատարած աշխատանքի արդյունքը կլինի խիստ կասկածելի: Ինչ հարց էլ ուսումնասիրել է մեծ հայագետը, անպայման դիմել է փաստերի ու վկայությունների, խստորեն հետևել օգտագործված աղբյուրների հավաստիությանը, փաստերը ստուգել իրարից տարբեր, ավելի հավաստի աղբյուրներով: Նա գիտական-նամակագրական կապ էր պահպանում եվրոպացի նշանավոր լեզվաբանների՝ Մեյեի, Հյուբշմանի և այլոց հետ, նրանցից ճշտում իր ստուգաբանություններն ու եզրակացությունները, խորհրդակցում նրանց հետ, նաև պատասխանում վերջիններիս հարցերին: Հաշվի էր առնում անգամ իր ուսանողների ու սովորական մարդկանց նկատառումները, նույնիսկ հարցնում տվյալ բնագավառի հետ քիչ առնչվող մարդկանց: Ինչպես վկայում է Աճառյանի գրեթե բոլոր հրատարակված աշխատությունների խմբագիր, ակադեմիկոս Էդ. Ադայանը, «Ինչ նյութի ուսումնասիրությամբ էլ զբաղվել է, ինչ տեսակետներ էլ արտահայտել է, բոլոր դեպքերում էլ հետևել է մեկ հիմնական սկզբունքի՝ նյութի մասին դատողություններ անելուց առաջ բազմակողմանիորեն քննության առնել այն, հավաքել բոլոր փաստական տվյալները, ի մի բերել մինչ այդ եղած հետազոտությունների արդյունքները՝ անկախ այն բանից, թե ինչ մակարդակով և ինչ սկզբունքներով են կատարվել այդ հետազոտությունները, օբյեկտիվորեն քննության առնել արտահայտված բոլոր կարծիքները և մերժել կամ ընդունել դրանք խորահմուտ վերլուծություններով ու հիմնավորված փաստարկումներով»¹⁰: «Փորձը

⁹ Տե՛ս Գ. Ս տ է փ ա ն յ ա ն. Հրաչյա Աճառյան. կյանքը և գործը, Երևան, 2013, էջ 185–186, 94:

¹⁰ Է. Ա դ ա յ ա ն. նշվ. աշխ., էջ 373:

նրա ամենասիրած բանն էր: Մի փաստը սիրում էր տասնյակ անգամ ստուգել: ... Նա իր աշխատությունները գրելու համար մի քանի անգամ կարդացել է գրաբար մեր ամբողջ մատենագրությունը, հազարավոր մասնագիտական և այլ կարգի գրքեր, նայել է հայ ճոխ պարբերական մամուլը»¹¹, – գրում է Գ. Ստեփանյանը:

Ընդհանրապես գիտական բարոյականության բաղադրիչներից է օգտագործած աղբյուրները նշելը: Աճառյանը իր աշխատություններում միշտ հիշատակում էր աղբյուրները. լավագույն վկայությունը նրա «Արմատական բառարանն» է, որի յուրաքանչյուր բառահոդվածի տակ նշել է աղբյուրը, գրել, թե ով է ճիշտ մեկնել, ով ինչ կարծիքի է և այլն: Նշել է նաև այն մարդկանց անունները, ովքեր թեկուզ մեկ հարցում, մեկ բառով օգնել են իրեն:

«Ուրույն էր նյութի հավաքման նրա մեթոդը: Վերցնում էր թերթերից ու մամուլից այն ամենը, ինչ իրեն պետք է գալու ծրագրված մի քանի աշխատանքների համար՝ միաժամանակ: Երբ վերցնում էր անհրաժեշտ նյութերը, ընդմիջտ փակում էր հաշիվը այդ հրատարակության հետ: Օգտագործած գրքերը չէր սիրում պահել տանը: Գոնե Երևանի պայմաններում երբեք գրադարան չունեցավ, նրա գրքերի թիվը հարյուրից չանցավ:

Յուրահատուկ ձևով էր օգտագործում պարբերական մամուլը: Պահում էր մի փոքրիկ գրպանի տետր, որտեղ գրել էր բոլոր թերթերի, ամսագրերի անունները, տարիները, համարները: Ոչ թե նշում էր կարդացածն ու օգտագործածը, գրի առնելով համարը, այլ ընդհակառակը կարմիր մատիտով ջնջում էր պարբերականի այն համարը, որ օգտագործել էր, ասելով. թե դրա հետ ընդմիջտ մաքրել է իր հաշիվը:

Հայ լեզվաբանությանը նվիրված գրքերն ու հոդվածներն օգտագործելիս կիրառում էր այլ սկզբունք, մանրամասն նշում էր տվյալ աշխատության անունը, հեղինակի ով լինելը, որտեղ տպագրվելը, էջը և այլն, ստեղծելով իր ամենարժեքավոր աշխատություններից մեկը՝ «Հայ լեզվաբանության մատենագիտությունը»¹², – հիշում է Գ. Ստեփանյանը:

Աճառյանն իր ստեղծագործական բեղմնավորությունը բացատրում էր ոչ այնքան աշխատասիրությամբ, որքան աշխատանքային ռեժիմի խիստ պահպանմամբ: Նրա աշխատանքային ժամերը չէր կարող խանգարել ոչ ոք՝ լինել դա ընտանիքի անդամներից, թե իր ամենասիրելի մարդկանցից մեկը: Ասում էր, որ եթե մարդ օրական երկուսուկես էջ գրի, տարեկան անում է 1000 էջ, այսինքն 40 մամուլանոց մի գիրք, իսկ 50 տարի ստեղծագործողն իր դարակում կունենա 50 հատոր գիրք:

Հայագետի աշխատությունների շարադրանքին բնորոշ է պարզությունն ու մատչելիությունը: Ընդ որում՝ դրանք դրսևորվում էին նաև իր դասախոսություններ-

¹¹ Գ. Ստեփանյան. Հրաչյա Աճառյան. կյանքը և գործը, էջ 302, 293–294:

¹² Նույն տեղում, էջ 297–298:

րի և զրույցների ժամանակ: «Նա լսել էր, որ ոմանք չեն հավանում իր գրելառճը՝ համարելով խիստ պարզ ու հասարակ: Աճառյանը բացատրեց, որ ինքը հայերեն է գրում, գրում է այն ձևով, որ ընթերցողն էլ գիտական հարցերը հասկանա. մլթոնե-րե՞ն գրի, էջանոց նախադասությամբ մտքերը շարադրի՞, որ կարդալով՝ ինքն էլ չհասկանա: Այնուհետև ավելացրեց, որ իր քննադատները թող բարի լինեն ֆրանսերեն գիտական գրականություն կարդան»¹³, – հիշում է Ա. Մուքիասյանը:

Ճշտապահ էր՝ միշտ և ամենուր. նույնն էլ պահանջում էր իր ուսանողներից ու ասպիրանտներից: Ճշտապահ էր հատկապես համալսարանական պարապմունքների ընթացքում. գալիս էր ճիշտ նույն բուպեին, գնում՝ նույն բուպեին: Չէր սիրում դասերից հետո պրոֆեսորական սրահում նստել ու զրույցի բռնվել: Եթե մեկնումեկը կամենում էր նրան բան հարցնել, կարող էր ուղեկցել մինչև տուն:

Աճառյանի նման լայնընդգրկուն գործունեություն ծավալած գիտնականը, բնականաբար, չէր կարող ապահովագրված լինել սխալներից ու վիրապումներից: Մեծ գիտնականի ստուգաբանական մի քանի վրիպումների «Հանդես ամսօրեայում» վիրավորիչ ձևով անդրադարձել է Հ. Ա. Վարդանյանը¹⁴: Աճառյանը պատասխանել է. «Ցու գզացի կարդալով թերթիդ մէջ Հ. Վարդանեանի յօդուածը (Հանդ. Ամս. 1922, էջ 269–300), ուր անարդար կերպով կ'աշխատի դատափետել զիս: Ամէնուս ալ նպատակն է հասնիլ ճշմարտութեան: Մարդ իր պրպտումներուն մէջ կրնայ յաճախ սխալիլ, բայց ասոր համար դատապարտել զինքը՝ ո՛չ որ իրաւունք ունի. եթէ միայն սխալը չարամտութեամբ եւ դիտմամբ եղած չէ: Ո՞վ չգիտէ որ լաւ է, բայց ո՞վ կրնայ ըսել թէ կրնայ յիշել ու աչքի առաջ բերել այն բոլոր մանր մուր յօդուածները, որ որեւիցէ բառի առթիւ տպուած են զանազան ժամանակներ, մանաւանդ Բիզանդիոնի մը կամ Ազատամարտի մը եւ կամ ուրիշ հասարակ օրաթերթի մը մէջ, որ «այսօր կայ եւ վաղիւ ի հուր արկանի»: Ճոխ մատենադարանի մը մէջ նստած, ամէն յարմարութիւն ունեցող անձի մը համար դիւրին է ազատօրէն խոսիլ. բայց նոյն իսկ այսպիսիներն ալ կրնան դարձեալ սխալիլ ու թերանալ»¹⁵: Կարծում ենք, այս տողերը պետք է ուղենշային լինեն բոլոր նրանց համար, ովքեր պատրաստվում են քննադատական խոսք ասել այս կամ այն անձի գործի կամ երևույթի մասին:

Աճառյանը հետևողական էր իր համոզմունքների մեջ, այն բացառիկ գիտնականներից էր, ովքեր պաշտոնի, փողի համար երբեք իրենց կարծիքը չեն փոխում, չեն գործում իրենց խղճի դեմ:

¹³ Ա. Մուքիասյան. Մեծ հայագետն ու հայրենասերը. – ՊԲՀ, 2001, -1, էջ 56:

¹⁴ Հ. Ա. Վարդանեան. Ի վկայսն Արեւելից. նոր ու ցանցառ բառերու ուսումնասիրութիւն. – «Հանդես Ամսօրեայ», 1922, թիւ 1, էջ 269–300:

¹⁵ Հ. Աճառեան. Հանդես Ամսօրեայի խմբագրութեան. – «Հանդես Ամսօրեայ», 1923, թիւ 1–2, էջ 65:

Լեզվաբանը՝ որպես լեզվի ուսումնասիրությամբ զբաղվող մասնագետ, պետք է իմանա հնարավորինս շատ օտար լեզուներ: Լեզուների իմացությունը պատվաբեր է յուրաքանչյուրի համար, լեզվաբանների պարագայում այն, կարելի է ասել, պարտադիր է: Լեզուներ սովորելը նույնպես պահանջում է որոշակի տաղանդ և կամային հասկանիչներ: Աճառյանն օժտված էր թե՛ մեկով, թե՛ մյուսով: Դեռ դպրոց չէր հաճախում, երբ հայերենի այբուբենն առանց գրքի սովորել էր հարևանի աղջկանից: Սամաթիայի Արամյան վարժարանում գրում-կարդում էր հայերեն, ֆրանսերեն ու թուրքերեն: Մ. Սահակյան թաղային վարժարանի իր դասընկերների վկայությամբ՝ Հրաչյան առաջադեմ էր բոլոր առարկաներից, սակայն նրա տարերքը լեզուներն էին: «Գրաբարը այնքան լավ գիտեր, որ «բռնում էր» տեսուչների սխալները»¹⁶, – գրում են դասընկերները. ինքն էլ չի ժխտում: Պատանեկան հասակում նա այնպես էր տիրապետում գրաբարին, որ աշխարհաբար էր փոխադրում մեր շատ պատմիչների երկեր (թվով 12). անում էր նաև հակադարձ փոխադրություններ: Պոլսո Կեդրոնական վարժարանում խորանում է իր իմացած լեզուների մեջ, շարունակում սովորել նորերը. պատանի Հրաչյան տիրապետում էր 8 լեզվի (ֆրանսերեն, անգլերեն, հունարեն, պարսկերեն, արաբերեն, թուրքերեն, եբրայերեն, գրաբար):

Աճառյանն իր՝ օտար լեզուների տիրապետելու վերաբերյալ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Սահակ Կարապետյանին ուղղված նամակ-դիմումում գրում է. «Ուսումնասիրել եմ հայերեն, ֆրանսերեն, պարսկերեն, ռուսերեն, թուրքերեն, գերմաներեն, անգլերեն, իտալերեն, քրդերեն, հնդկերեն (սանսկրիտ), իսլադերեն, զենդերեն, արաբերեն, լազերեն, հունարեն, լատիներեն, պահլավերեն, վրացերեն»¹⁷ (մեր կարծիքով՝ սա իր իմացած լեզուների ամբողջական ցանկը չէ): Օտարները զարմանում էին, եթե ոչ՝ ապշում նրա փայլուն լեզվաիմացության վրա, կարծում էին՝ նա իրենց ազգակիցն է: Աճառյանի լեզվաիմացության աստիճանը ցույց տալու համար հատվածաբար մեջբերենք Շահեն Զաքարյանի «Հրաշքը» վերնագրով ակնարկը. «...Գերմանիայից ինչ-որ պատվիրակություն էր եկել, և թարգմանիչ էր պետք: Թահանձագին խնդրում էին գալ: Դժկամությամբ պոկվեց գործից ու գնաց: Երբ այդ հանդիպումն ավարտվեց, հյուրերից մեկը հետաքրքրվեց թարգմանիչ ազգությամբ:

– Հայ եմ, գտարյուն հայ, – ասաց:

– Բայց դուք գերմաներեն խոսում եք զարմանալիորեն վարժ:

– Պարզապես ձեր լեզուն իմանալը յուրաքանչյուր կիրթ մարդուն օդ ու ջրի պես անհրաժեշտ է: Դուք ամենատարբեր բնագավառներում այնպիսի գլուխներ եք տվել, որ նրանց աշխատությունները բնագրով կարդալը հանրագիտարանային գիտելիքներ կարող է պարզենել մարդուն:

¹⁶ Խ. Բ ա դ ի կ յ ա ն. Հրաչյա Աճառյան մարդը և գիտնականը, Երևան, 2005, էջ 16:

¹⁷ Հ. Ա ճ ա ռ յ ա ն. Նամակներ, Երևան, 2003, էջ 120:

Այս հանդիպումից երկու շաբաթ էր անցել: Հայաստանից պատվիրակություն պետք է մեկնեք Ֆրանսիա: Թարգմանիչը նորից նա է: Ֆրանսիացիները, որոնց շատ դժվար է որևէ բանով զարմացնել, բերանները բաց հետևում էին հայ թարգմանչին: Նման մաքուր ֆրանսերեն, մանավանդ բառապաշարի հարստություն, նրանք, անկասկած, չէին սպասում: Հանդիպման հիմնական թեման մոռացած նրանք անցան լեզվի հարցերին, և թարգմանիչը ապշեցրեց բոլորին:

– Ներեցեք,– նրան է դիմում ֆրանսիացիներից մեկը, որ, հավանաբար, լեզվի մասնագետ էր,– պատահաբար ձեր արմատները մեր հողո՞ւմ չեն ծլարձակել:

– Ոչ,– կարճ պատասխանում է թարգմանիչը, ապա ավելացնում է,– իմ արմատները իմ հարազատ Հայաստանի հողում են ծլարձակել:

Օրեր անցան, ... : Երեկոյան ժամ էր, երբ զանգեցին և հրավիրեցին քաղաքային կոմիտե: Լոնդոնից պաշտոնական գրություն էր եկել, շտապ պետք է թարգմանվեր և պատասխան ուղարկվեր: Անգլերեն նա գիտեր համարյա մայրենիի նման, չնայած քիչ էր գործածում: Բնագրից Շեքսպիր էր կարդում, Բայրոն: Իսկ իռլանդացի Բեռնարդ Շոուն նրա սեղանի գիրքն էր: Ինչ որ պետք է՝ անում է, անգամ քերականական մի քանի ուղղումներ կային բնագրում...

Բավական ժամանակ նրան չէին անհանգստացնում: ... Բայց ահա նորից զանգ ... ձոխ հյուրընկալություն էր կազմակերպվել տարբեր երկրներից Հայաստան ժամանած պաշտոնական անձանց համար: Եկել էին Իսպանիայից, Իտալիայից, Հունաստանից, Իրանից, Հնդկաստանից... Եվ, պատկերացնո՞ւմ եք, հրավիրված էր ընդամենը մեկ թարգմանիչ: Ապշել միայն կարելի էր, թե թարգմանիչը ինչպես էր կարողանում այդ բոլոր օտար ազգերի լեզուները թարգմանել: Եթե մերոնց համար դա այնքան էլ զարմանալի չէր, լավ էին ճանաչում նրան, հյուրերը պարզապես ցնցված էին: Թարգմանիչը ոչ միայն թարգմանում էր, այլև իր կողմից հաճոյախոսություններ էր անում, անեկդոտներ պատմում, մեկը մյուսից իմաստալի կատակներ անում:

«Սա հրաշք է,– ասում էին:– Եթե Հայաստանի հողը նման հրաշքներ է ծնում, ուրեմն այդ հողը սուրբ հող է, ազնվացնող հող»:

Այդ հրաշքը մեր հանձարեղ լեզվաբան Հրաչյա Աճառյանն էր, որ կազմում էր հայոց լեզվի քերականությունը աշխարհի համարյա բոլոր լեզուների համեմատությամբ¹⁸:

Հայտնի խոսք կա. «Տաղանադավոր մարդը տաղանդավոր է ամեն ինչում»: Քչերը գիտեն, որ Աճառյանը ոչ միայն մեծ գիտնական էր, այլև մեծ մանկավարժ: Այս երկու շնորհները միշտ չէ, որ մեկտեղվում են մեկ անհատի մեջ. կան մարդիկ, որ լավ, անգամ մեծ գիտնական են, բայց ոչ նույնքան լավ մանկավարժ, և հակառակը՝

¹⁸ Շ. Չաքարյան. Հրաշքը. – «Եթեր» շաբաթաթերթ, 22. 02. 2007, - 8, էջ 15:

լավ մանկավարժ են, սակայն նույնը չեն գիտության մեջ: Աճառյանը այն եզակիներից էր, որ համատեղում էր երկուսը: Շատ բարձր էր գնահատում ուսուցչի դերը. մեծ ակնածանք ուներ իր ուսուցիչների նկատմամբ. պաշտում էր շատերին: Իր ուսանողներին ասում էր. «Ամեն մի հայ երկու անուն պետք է լավ հիշի, մեկ Մեսրոպ Մաշտոցի անունը, մեկ էլ այն ուսուցչի, որ առաջին անգամ Մեսրոպյան տառերը սովորեցրել է իրեն: «Ա» տառը ումից որ սովորել ենք, նրան երախտապարտ պիտի մնանք մինչև մեր կյանքի վերջը»¹⁹:

Մանկավարժության մեջ կիրառում էր այնպիսի մեթոդներ, որոնք կարճ ժամանակահատվածում ապահովում էին մեծ արդյունք: Դասատվության աճառյանական մեթոդների մասին բազմաթիվ գրառված հիշողություններ կան մամուլում՝ ինչպես աշակերտների, այնպես էլ Երևանի պետական համալսարանի ուսանողների կողմից: Մայր բուհում աշխատելու 30 տարիների ընթացքում նա մի քանի առարկա է դասավանդում: Ըստ իր ուսանողների՝ Աճառյանը ոչ թե դասախոսում էր, այլ դասանյութի շուրջ զրուցում ուսանողների հետ, բերում կենդանի օրինակներ, դրանք բացատրում շատ պարզ ու հասկանալի լեզվով: Այդ գերագույն պարզության մեջ, սակայն, պահում էր ուսուցչապետի բարձր հեղինակությունն ու լրջությունը: «Նա հենց առաջին ժամից սկսեց մեզ հետ պարսկերեն խոսել, անեկդոտներ պատմել, և հենց այդ կենդանի զրույցի ընթացքում էլ մենք սովորում էինք քերականության էական կողմերը: Մի շաբաթ էլ չէր անցել, որ մենք միմյանց պարսկերեն պատմում էինք մանրադեպեր, ուղղում միմյանց սխալները: ...Նա մեզ այնքան առաջ էր սովորեցրել պարսկերենը, որ մեր ընկերներից մեկը, ընդամենը երկու տարի անց, արդեն պարսկերեն էր դասավանդում բանասիրական բաժնում, և այդ այն դեպքում, երբ ինքը՝ Աճառյանը, պարսկերեն կանոնավոր դասընթացների չէր հետևել, մի քիչ սովորել էր Կ. Պոլսի կենտրոնական վարժարանում, ավելի շատ՝ Թավրիզում ապրած տարիներին, մասնավոր մարդկանցից»²⁰, – գրում է Գ. Ստեփանյանը: Հատկապես օտար լեզուներ սովորեցնելիս մեծ տեղ էր տալիս անգիրներին. դա համարում էր բառապաշարի հարստացման և տվյալ լեզվով բառերի ու նախադասությունների ճիշտ արտաբերման ու ճիշտ շեշտադրության լավագույն միջոց:

Աճառյանը թարգմանությունը նույնպես լեզու սովորեցնելու լավագույն միջոց էր համարում: Նրա սանուհիներից մեկը՝ բ. գ. թ. Արփիկ Մինասյանը, գրում է, որ հմուտ մանկավարժի մեթոդների շնորհիվ, ուսանողները ոչ միայն սովորում էին ազատ գրել ու կարդալ, այլև հրաշալի թարգմանություններ էին անում պարսկերենից հայերեն և հայերենից պարսկերեն. դրանք (Պարոնյանի «Պաղտասար աղբարը», «Քաղաքավարության վնասները» և այլն) նա բեմադրում էր համալսարանա-

¹⁹ Գ. Ստեփանյան, Աճառյանի հետ, Երևան, 1976, էջ 11–12:

²⁰ Նույն տեղում, էջ 50–51:

կան երեկոներին և, լսելով իր ուսանողների մաքուր ու հստակ արտահայտությունները, հուզվում էր, «Լճակը» պարսկերեն լսելիս՝ արտասվում²¹:

Ուսուցիչը ոչ միայն պետք է գիտելիքներ տա իր սաներին, այլև նրանց մեջ սերմանի ազգային ինքնագիտակցություն, անշուշտ, նաև բնավորության այլ առաքինի գծեր: Ըստ նրա սիրելի սանուհու՝ շնորհալի լրագրողուհի Կլարա Թերզյանի՝ Աճառյանն իրենց ասում էր. «Հայերն են գտել երկաթը, առաջինը հայերենում է հանդիպում երկաթ բառը»: Մի օր էլ պատմել է որդան կարմիրի ու տորոնի մասին՝ ասելով, որ հայերն էին Եվրոպային կարմիր ներկ մատակարարողները²²:

Ուսուցչության մեջ հաջողելու գրավականներից մեկը հոգատար վերաբերմունքն է սաների նկատմամբ. ուսուցիչը պետք է վերջիններիս վերաբերվի այնպես, ինչպես ծնողը զավակներին, իհարկե, սաներն էլ պետք է վերաբերվեն ուսուցչին ինչպես իրենց ծնողին: Աճառյանը, իր սիրելի ուսուցիչների՝ Մեյեի ու Հյուբշմանի նման, բազմաթիվ ուսանողների հետ տանը պարապում էր առանց որևէ ակնկալության ու նյութական վարձատրության, նրանց տրամադրում իր ձեռագրերը: Հաճախ իր աշխատավարձից կանոնավորապես որոշակի գումար էր հատկացնում իր բազմաթիվ լավ սովորող չունևոր ուսանողների՝ գաղտնի պահելով այդ օգնությունը՝ ստացողի ինքնասիրությունը չվիրավորելու համար: Մարդու նկատմամբ ունեցած կարեկցանքը նրա մեջ ձևավորվել էր դեռ աշակերտական տարիներից. Հրաչյան, նաև դասընկերները, իր օրապահիկից ու ճանապարհաժախսից գումար էր տնտեսում՝ հիվանդ ուսուցչին՝ Հակոբ Պարոնյանին, նյութական օգնություն ցույց տալու համար:

Ծնողապաշտ էր. իր սաներին խորհուրդ էր տալիս սիրել ու պաշտել մայրերին: «Մենք պարտական ենք մեր մայրերին, որոնք մեր գենը չեն խառնել օտարներին, միշտ հավատարիմ են մնացել իրենց ամուսիններին»²³: Հոգեպես շատ կապված էր հոր հետ: Ընտանիքը նրա համար սրբություն էր:

Աճառյանը մեծ հայրենասեր էր: Միայն նրա՝ պաշտամունքի հասնող սերը մայրենիի ու հարազատ ժողովրդի հոգևոր նվաճումների նկատմամբ և վիթխարի ներդրումը հայագիտության մեջ լիովին բավարար են այս բնորոշումը հաստատելու համար: Սակայն նրա կենսագրության մեջ եղել են հայրենասիրության ու ազգասիրության այլ դրսևորումներ ևս: Մորբոնում ուսանելու տարիներին կամեցել է միանալ Ջեյթունի 1895 թ. ինքնապաշտպանությանը մասնակցելու պատրաստ երիտասարդների խմբին: Ջեյթունի համար կազմակերպված հանգանակության ժա-

²¹ Ա. Մի և ա յ յ ա ն. Հիշողություններ մեծ գիտնականի կյանքից. – «Սովետական մանկավարժ», 1966, -6, էջ 59:

²² Կ. Թերզյան. Որքան լույս կա Հայաստանում, Երևան, 1989, էջ 44:

²³ Խ. Բադիկյան. նշվ. աշխ., էջ 179:

մանակ, չափազանց ծանր նյութական դրության մեջ լինելով հանդերձ, տրամադրել էր իր հոգեպահուստ 20 ֆրանկը՝ խնդրելով, որ իր անունը չհրապարակվի²⁴:

Մեծ պոլսեցին սերտորեն կապված էր իր հայրենիքին: Մի անգամ (1899 թ. Արտաշատ գյուղի պեղումների ժամանակ) Ն. Մառը նրան հարցնում է. «Ի՞նչ պիտի անեք դուք այստեղ»: «Ուսուցիչ եմ և սիրում եմ ուսուցիչ մնալ, ծառայելու համար իմ ժողովրդին», – պատասխանում է Աճառյանը: «Բայց դուք գիտեք, թե ինչքան տառապալի է հայ ուսուցչի վիճակը. այստեղ ձեզ ոչ ոք չի գնահատի. դուք կմնաք խեղճ ու թշվառ. եկեք ինձ հետ Պետերբուրգ, ձևի համար աշակերտեցեք ինձ մի տարի, ռուսերեն կսովորեք, կավարտեք, ես ձեզ կամուսնացնեմ պրոֆեսորներից մեկի քրոջ կամ աղջկա հետ, և դուք կլինեք նշանավոր գիտնական», – շարունակում է Մառը: Ի պատասխան Աճառյանն ասում է. «Ավելի լավ եմ համարում մնալ աղքատ ուսուցիչ և ապրել ու ծառայել իմ հարազատ ժողովրդի մեջ, քան թե գնալ Ռուսաստան»²⁵: Պատմությունը կրկնվում է պրոֆեսոր Մեյլեի հրավերի դեպքում [Փարիզից նա մի քանի անգամ է հրավեր ստացել՝ նույնիսկ Սորբոնի համալսարանում իբրև դիրեկտորի տեղակալ (պրոռեկտոր) աշխատելու]:

Մի առիթով գիտնականն ասել է. «Մենք փոքր ազգ ենք, եթե հայերը ազգասեր չլինեին, հայ ազգը այդքան դարեր չէր կարող պահպանել իր գոյությունը»²⁶:

Որպես մեծ հայրենասեր՝ Աճառյանը, բնականաբար, կարևորում էր ազգի միասնությունը: Մեր դեպքում դրա կարևոր պայմաններից մեկը գրական հայերենի երկու՝ արևմտյան ու արևելյան տարբերակներն իբրև մեկ ամբողջություն ընդունելն է: «Կյանքիս հուշերից» գրքում Աճառյանը գրում է, որ Գևորգյան ճեմարանի երկու ուսուցիչներ, լսելով Աճառյանի՝ Պոլսից նոր Վաղարշապատ եկած քրոջ ռուսահայերենը, զարմանում են, նրանցից մեկը հարցնում է.

– Օրիորդ, այդ ի՞նչ շուտ սովորել եք մեր լեզուն:

Աճառյանի քույրը զարմանքով պատասխանում է.

– Մեր լեզուն, ձեր լեզուն ո՞րն է, ի՞նչ տարբերություն մեր և ձեր մեջ: Բացառականը կազմում եք ից-ով, ներգոյականը ում-ով, ներկան էլ ում եմ: Ճանապարհի 2 օրվա ընթացքում այդքանը չէի՞ կարող սովորել: Մեջբերելով այս դեպքը՝ Աճառյանը գրում է. «Այս փոքրիկ միջադեպը ես հաճույքով պատմեցի ցույց տալու համար, թե որքան սխալվում են նրանք, որոնք մեր երկու բարբառները իրարից անջատում են իբրև տարբեր լեզուներ և նրանց միջև մի մեծ անջրպետ են շինում: Արևմտահայերը ամենամեծ ճշտությամբ հասկանում և սովորում են արևելահայ լեզուն...»²⁷:

²⁴ Հ. Աճառյան. Կյանքիս հուշերից, Երևան, 1967, էջ 172:

²⁵ Նույն տեղում, էջ 225:

²⁶ Գ. Ստեփանյան. Օրհնված ծառը. – «Գրական թերթ», 07. 10. 1988, -41, էջ 4:

²⁷ Հ. Աճառյան. Կյանքիս հուշերից, էջ 242:

Մտավորականը, մանավանդ հեղինակություն վայելող մտավորականը չպետք է անտարբեր լինի պետությանը, ազգին ու հասարակությանը հուզող խնդիրների նկատմամբ: Աճառյանն օրինակելի էր նաև այս առումով, կարհնետային մտավորականներից չէր: Հրապարակախոսությունը համարում էր մարդ-քաղաքացու բնորոշ ու հիմնական պարտականությունը. քաղաքացին չպետք է անտարբեր լինի շրջապատի ու մարդու նկատմամբ, պետք է նկատի ամեն ինչ՝ լավը դրվատի, վատը պարսավի, ապրի իր երկրի ու ժողովրդի կյանքով, իր հողվածներով ու ելույթներով արձագանքի բոլոր դեպքերին ու երևույթներին:

Աճառյանին շատ բնորոշ էր խնայողությունը. վերջինս համարում էր նաև պետության հարստացման ու ամրակայման գործոններից մեկը՝ խնայել պետական գույքն ու ունեցվածքը, խնայել ժամանակն ու տարածքը: Ի դեպ, ժամանակի վատնումն ավելի մեծ կորուստ էր համարում, քան նյութականին:

Բոլոր ազգերի ու ժամանակների մեծ լեզվաբաններից մեկը՝ Հրաչյա Աճառյանը, մահկանացուն կնքում է 1953 թ. ապրիլի 16-ին Երևանում:

ВЫДАЮЩИЙСЯ АРМЕНОВЕД
(К 140-летию со дня рождения Рачья Ачаряна)

РАЧЬЯ БАЛОЯН

Резюме

Выдающийся арменовед Рачья Ачарян родился 8 марта 1876 г. в Константинополе. Научное наследие, оставленное им, сосредоточено в 250 больших и малых трудах. Он изучил все сферы арменистики, основал некоторые ее отрасли – история армянского языка, армянская диалектология и т. д. Наиболее значимые труды Ачаряна: «Классификация армянских диалектов», «Армянская диалектология», «Армянский диалектный словарь», «Этимологический коренной словарь армянского языка», «Словарь армянских личных имен», «История армянского языка», «Полная грамматика армянского языка в сравнении с 562 языками». Новаторство Ачаряна заключается в изучении армянских диалектов, их классификации и определении принципов изучения. Он этимологизировал многие армянские слова. Ачарян был первый, кто серьезно исследовал вопрос, повлиял ли армянский язык на другие языки. Занимался также проблемами армянской литературы, армянской истории и изучением Армянского вопроса. Для стиля изложения его трудов характерны ясность и доступность. Ачарян свободно владел многими языками. Он был великим педагогом и патриотом. Рачья Ачарян умер 16 апреля 1953 г. в Ереване.

THE EMINENT ARMENOLOGIST
(On the 140th birth anniversary of Hrachya Acharyan)

HRACHYA BALOYAN

Summary

The eminent Armenologist Hrachya Acharyan was born on March 8, 1876 in Constantinople. His legacy includes 250 works, big and small. He had explored all spheres of Armenian Studies and even initiated some of its branches, like History of the Armenian Language, Armenian Dialectology, etc. The most significant works by Acharyan are as follows: “Classification of the Armenian Dialects”, “Armenian Dialectology”, “The Armenian Dictionary of Dialects”, “The Etymological Root Dictionary of the Armenian Language”, “The Dictionary of the Armenian Personal Names”, “History of the Armenian Language”, “A Complete Grammar of the Armenian Language in Comparison with 562 Languages”. Acharyan’s innovation was in the study of the Armenian dialects, their classification and in formulating the principles of their research. Acharyan explored the etymology of multiple Armenian words. He was the first who studied the possible influence of Armenian upon other languages. Within Acharyan’s interests were also problems of Armenian literature, History of Armenia and the Study of the Armenian Question. The writing features of his works were clarity and accessibility. Acharyan was in possession of numerous languages. He was a great educator and a patriot. Hrachya Acharyan died on April 16, 1953, in Yerevan.